22
08

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0078, Երևան, Հալաբյան 41/ա, հեռ. 060 713 413

ՀՀ N 3078 «05» 08 2022 թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
ք. Եղվարդ, Երևանյան 1

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

Նաիրի համայնքի (այսուհետ՝ Համայնք) ավագանու 29.06.2022թ. թիվ 135-Ա և նույն համայնքի ղեկավարի 04.07.2022թ. թիվ 2126-Ա որոշմամբ՝ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ք. Եղվարդ, Երևանյան թաղամաս N 1 հասցեի անշարժ գույքի (որտեղ 2013 թվականից տեղակայված է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Կոտայքի մարզային բաժնի Եղվարդի բաժանմունքը) վարձակալության ընդհանուր ամսեկան վճարը սահմանվել է 104.160 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով նշվածը՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) և Կոտայքի մարզի Նաիրի համայնքի՝ ի դեմս համայնքի ղեկավարի (այսուհետ միասին՝ Կողմեր) միջև 14.07.2022 թվականին կնքվել է անշարժ գույքի մասի վարձակալության թիվ 1400 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում:

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆԱԻՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ թիվ Դ-2618
«10» 08 2022թ.

Պայմանագրի համաձայն՝ Կոտայքի մարզի՝ Նաիրի համայնքի ք. Եղվարդ, Երևանյան թաղամաս N 1 հասցեի անշարժ գույքի վարձակալության ընդհանուր ամսական վճարը սահմանվել է 104.160 ՀՀ դրամ:

Հարկ է ընդգծել, որ նշված վարձավճարի չափը գերազանցում է նախկինում որոշված վարձավճարի չափի կրկնակին: Մասնավորապես, Նաիրի համայնքի ավագանու 28.11.2013թ. թիվ 37-Ա որոշմամբ նույն տարածքի վարձավճարի չափը սահմանված է եղել 47.740 ՀՀ դրամ, ինչի հիման վրա Կողմերի միջև կնքված է եղել վարձակալության պայմանագիր և Ծառայությունը տարիների ընթացքում տարածքը օգտագործել է առանց որևէ խոչընդոտի:

Հարկ է նշել, որ Ծառայությունը պետական մարմին է, որի ամեն մի ծախսը ֆինանսական տարվա սկզբին հաստատվում է պետական բյուջեով:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի վերլուծությունից բխում է, որ պետական և համայնքների բյուջեների բոլոր ելքերը ենթակա են ֆինանսավորման՝ բյուջետային համակարգում կուտակված բյուջետային միջոցների հաշվին: Օրենսդրությամբ սահմանված բյուջեների մուտքերը և ելքերը պարտադիր կարգով և ամբողջ ծավալով ենթակա են արտացոլման բյուջեներում:

Ուստի, պետական որևէ մարմնի կողմից կամայական ծախս իրականացնելու համար պարտադիր նախապայման է տվյալ ծախսի ֆինանսավորման համար համապատասխան տարվա պետական բյուջեում համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսված լինելը, և այս իմպերատիվ կանոնից ՀՀ օրենսդրությունը որևէ բացառություն չի նախատեսում:

Այնինչ, Համայնքի ավագանու 29.06.2022թ. թիվ 135-Ա և նույն համայնքի ղեկավարի 04.07.2022թ. թիվ 2126-Ա որոշմամբ՝ պետական բյուջեի վրա դրվել է հավելյալ ծախս, որը նախատեսված չի եղել 2022թ. Ծառայության բյուջեով, և Ծառայությունը ի վիճակի չի լինելու կատարել Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները: Ըստ այդմ, վարձակալության գումարը վճարելու անհնարինության հետևանքով կարող է վտանգվել Ծառայության բնականոն գործունեությունը՝ իր բացասական հետևանքներով:

Հետևաբար, հաշվի առնելով Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ֆինանսական միջոցների ծախսման ուղղությունների կանոնակարգվածությունը, երկար տարիների ընթացքում Ծառայության և Համայնքի փոխադարձ համագործակցությունը և

նպատակ ունենալով շարունակելու այդ համագործակցությունը՝ խնդրում եմ հնարավորության դեպքում քննարկել Նաիրի համայնքի ավագանու 29.06.2022թ. թիվ 135-Ա և նույն համայնքի ղեկավարի 04.07.2022թ. թիվ 2126-Ա որոշումները՝ վարձավճարի չափը սահմանելով 47.740 ՀՀ դրամ (ինչպես նախկինում):

Շնորհակալություն աջակցության համար:

Հարգանքով՝

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԱՇՈՏ ԱՎԱԳՅԱՆ**

Կատ.՝ Էլմիրա Մեջլումյան
Իրավաբանական բաժին
060-713-441 /00173/